

մութեամբ էին պայծառացեալ, մի քան զմի
 զեղեցիկ. նաև ի կանթեղիցն էր զուգած
 25 ազգ եւ ազգ շինուածք, եկեղեցիք, խաչեր,
 դամպէթք, խուլայք: Եւ ժողովեալ անթիւ կար-
 գաւորք, քահանայք եւ կրօնաւորք եւ սկսեալ
 յերեկոյէն մինչեւ յառաւօտն մեծ հսկումն
 արարին, թարօր շուրջ գալով երգօք հողեւո-
 30 րօք, սաղմոսիւք եւ օրհնութեամբ. ապա
 եկին յայն մօյտանն զէմ լուսոյ բաղմամբօր
 ժողովրդօք: Եւ անդ էր տեսանել բազմու-
 թիւն արանց եւ կանանց, երիտասարդաց եւ
 կուսից, աղքատաց եւ մեծատանց, պարօնաց
 35 եւ իշխանաց: Եւ նախ յարձակեցան վիշտօղբն
 ի վերայ միմիանց, յորոց բերանոց հուր ելա-
 նէր. եւ զէսնիֆով բոլոր անձն նոցա թօբի
 զեղեր լցած ամէն տեղն, որ կենդանեաց նման
 ի վերայ միմիանց ձգէին հուր, մինչեւ սպա-
 40 սեցան եւ այրեցեալ անկան ի վայր: Ապա
 սկսան սպառազինել ձիաւոր զինվորքն. եւ
 բազում ժամս հարեալք՝ ապա սկսան թուֆս
 արձակել. եւ զեղարդից նոցա հուր բորբո-
 քէր եւ այրէր. եւ այնպէս ճայթմունք, թըն-
 45 դիւնք լինէին մինչեւ խորտակեալ անկեալ
 լուցիկի հրոյ լինէին. նոյնպէս եւ այլքն:

Իսկ ի խուլայից եւ բերդից բազում
 սքանչելիք լինէին, ցորմունք, որոտմունք,
 փայլատակմունք ի հուր բորբոքեալ անկա-
 50 նէին ի վերայ մարդկանց. եւ հաւատացելոց
 բերթէն ելեալ հուր՝ այրեաց ի սպառ զբերթն

33 յարանց: — 38 զեղէր: — 44 թնթիւք: —
 46 լուցքի: — 51 յայրեաց: